


466

ㄥ III 3

Am 1. Sept. 1894. Folgende unter-
zeichnete Person, in welchem 13/25 Jahre 1894



ՎԱՃԱՌԱՌԱԿԱՆ

քիֆլիսի անուորական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով, 10 ամսայ զինքը Մարտից մինչև Յունիսը, քաղաքում 2 ման 50 կոպ., դուրսը 3 ման թ.

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղթին ստորագրելի կարելի է խմբադրողի մօտ:
Գաղթի մը հրատարակելու կընդունին մասնաւոր յայտարարութիւններ: Գնորի մասին կարելի է խմանալ խմբադրատանը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Տերութենի կարգադրութիւնները, տողերը: Երազայի առուտորի վիճակը: Եկեղեցւորները և Վարի նախալին: Սահարական տեղեկութիւններ, մաղանդէք:

ՏԵՐԹԵՆԻ ԿԱՐԳԱԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
էս տարի Յունիսի 7-ին հրամայեց նշանակել Արքեպիսկոպոս Գէորգ վեհապետանին էջմիածնի Սինոդի անդամ:

Գլուխարտումնին խմբադրող
Գլուխարտումնին նշանակած է էս մարտի 20-ին Թէլաւի ուղղի Օժիւ և Խորխիսի անունով զեղրի մէջը գտնված երկու եկեղեցական բաղի իջարով տալու տողը:

Միևնոյն տեղը նշանակած է էս Մարտի 19-ին Թիֆլիսի Սիւնի քուչումը գտնված եկեղեցական մէկ դուքանի իջարով տալու տողը:

Ելի կնակը նշանակած է Մարտի 19-ին Թիֆլիսի, Գուշեթի և Գորուհուսերի խտակ մոմի իջարով տալու տողը:
Գիբրեղի Սբ. Եղիշի Սուրբումը նշանակած է էս Մարտի 18-ին Թիֆլիսի քաղաքացի Զաքար Տէր Խաչատուրովի 4100 մ. զին զրած բաղն ուղեւինը ծախելու համար տողը:

Զակալկազսի կաղնճնի Պալա-

տումը նշանակած է էս Մարտի 11-ին Գուշեթի և Լենքարանի արքիդի տողը:

Երևանի Գուրբենսկի Պրաւլենիումը նշանակած է էս տարի Մայիսի 10-ին Թիֆլիսի քաղաքացի Մովսէս Միրիմանովի 1672 մ. զին զրած Երևանի 13 դուքանի ծախելու տողը:

Թելաւո—Սիւնիսի Ուկրէնի Սուրբումը էս տարի ապրիլի 16-ին նշանակած է Գալազա և Սանուարոզ գեղերի մօտ Ալազան գետի ձկան իջարով տալու տողը:

Կապազսկի Վաննի Օկրուդի Արուստայ Արտիկերիովի Պրաւլենիումը նշանակած է էս մարտի 17-ին գանազան մատերեալների և խնտորումնաների հասցիելու համար տողը:

Տերսկի Օբլաստայ Սուրբումը, որ գտնվում է Վաղրիկաւաղ, նշանակած է էս տարի Յունիսի 3-ին Պաղպոլիովի 11000 մ. զին արած տան ծախելու տողը:

Թիֆլիսի Վաննի գոշիւտումը մարտի 19-ին նշանակած է գոշիւտովի փեղեղների, երկաթեղների և չուգունեղների ներկելու տողը:

Կապազսկի Վաննի Օկրուդի Վոլենի Մեղիլնիսի ուղարկւնիումը նշանակած է ապրիլի 4-ին Թիֆլիսի Զաքարի Կախոսկի մատերեալների, պրիպասների և կաւե ամանների հասցիելու տողը:

ԹԻՖԼԻՍ

Մարտի 5-1866:

Ամերիկայի էս մէկ քանի տարուայ պատերազմը, թէպէտ մօտ 5 միլիոն նեգրերին ազատեց դերութենից, բայց Եւրոպայի առուտորին և մանաւանդ փողին մեծ հիւաններ տվեց:
Ահա քանի տարի է, որ ողջ Եւրոպան զանգաստվում է, թէ փող չկայ, ամեն տէրութիւն ահազին պարտքերի մէջն է, ամենքը փողի կարօտութիւն ունին, ամենքը փող են պտրում և փող չկայ: Անգլիայի բանկը մինչև անգամ հարկադրվեցաւ բարձրացնել իր շահը մինչև 8-ը:

Մէկ քանի տարի առաջ, մանաւանդ մինչև Ամերիկայի պատերազմը, 4 և 5 շահով փող գտնելը Եւրոպայում ամենևին դժուար բան չէր, բայց հիմի Եւրոպայի առաջին կարգի տէրութիւնները, փողին մեծ կարիք ունենալով, մինչև անգամ 7, 8 և 9 շահով հազիւ են կարողանում փող գտնել: Տաճկաստանը 12 շահով էլ չէ ձարում փող:

Ո՛ւր գնաց փողը: Ամերիկան, որ պատերազմից առաջ Եւրոպան և սրահեւ միասին ողջ աշխարհը բամբալով կերակրումէր, պատերազմից յետո՛ւ

տոյ վերջացրուց էդ բանը և յանհարձ Եւրոպայումը հատաւ բամբակը: Ֆաբրիկաներումը հարիւր հազարներով բանող մշակները մնացին անգործ, ֆաբրիկաների մեծ մասը կողպւեցաւ: Բամբակ չկայ—առւտրական աշխարհումը կնշանակէ գործ չկայ, հաց չկայ:

Անգլիացիքը, որ ողջ աշխարհի առուտուրը իրանց ձեռքումն ունին բռնած, էստեղ էլ ճար արին էդ ցաւին: Ամերիկայից բամբակ ստանայու յոյսը կորած՝ Անգլիացիքը դարձան դէպի Ասիան և երկու երեք տարուայ մէջ Տաճկաստանից, մեր Կովկասից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Չինաստանից, Եսպանիայից, կղզիներից և էն բոլոր երկիրներից, որոնք ընդունակ էին բամբակ տալու, սկսեցին կրել բամբակի դէպի իրանց կողմը: Եւրոպան նորից ունեցաւ բամբակ: Բայց Եւրոպայի փողը, ոսկին ու արծաթը մտաւ Ասիայեացի ջրբը ու էլ էստեղից դուրս չեն դարիւ: Ամերիկայի հետ առուտուր անելիս, թէպէտ Եւրոպացիք Ամերիկայից բամբակ էին առնում և նաղդ ոսկի էին տալիս, բայց յետոյ Ամերիկացիքն էլ իբրեւ լուսաւորված ազգ և իբրեւ Եւրոպայի գեղեցիկ ապրանքներին կարօտութիւն ունեցող, նորից յետ էին բերում տարած ոսկին և առնում էին Եւրոպացիներին իրանց բամբակից շինած ապրանքները: Ուրեմն էդտեղ Եւրոպան բացի օգոտը մնաց չուներ, չիմի բանը փոխվել է ուրիշ կերպ: Անգլիացիք բերում են բամբակը Ասիայից, ոսկին մտնում Ասիայեացի ջրբը և մտնում էնտեղ, որովհետեւ Ասիայից իբրեւ չլուսաւորված ազգ բաւականաւունք ունեն իրանց երկրի բերքերով և Եւրոպայեացի գեղեցիկ ապրանքների հարկաւորութիւն չունին: Եւ էս պատճառը, որ հիմի

Եւրոպայումը քշանումն ոսկին և շատանումն Ասիայումը: Ուրեմն կլինի, որ Եւրոպայի ոսկին բոլորովին հատնի և բոլոր փողը ժողովվի Ասիայումը: Պատասխան ենք տալիս թէ որ էդպէս շարունակվի բանը ի հարկէ կ'իստարվի էդ մարդարէութիւնը: Բայց էդտեղ էլ բայց կայ: Ամերիկայի բամբակի արտերը շուտով չեն դուրս կանգնիլ և շատ երկար ժամանակ մենք չենք տեսնիլ էն օրերը, որ կար Ամերիկայի պատերազմից առաջ: Մեր յոյսը մնումն Ասիայի վրայ: Անգլիացիքը էդտեղ էլ մեզ օգնում են: Որ երկիրն էլ որ մտնում են դրանք, ամեն տեղ էլ կ'արողանում են տարածել լուսաւորութիւնը, ուրեմն և լաւ ուտել—խմել և ճոխ ապրելու հարկաւորութիւնը: Չինաստանիցը հիմի սովորել են Եւրոպայի ապրանքների համին: Եւրոպայեացի ֆաբրիկաների բրդեղենները, բամբակեղենները, ապրեւորում են ինքները ոչ միայն Չինաստանից համար, այլ և շատ վայրերի ազգերի համար սկսում են հիմի էնքան հարկաւոր դառնար ինչքան և շաքարը և երկաթեղենը: Կարծիք չկայ, որ մէկ օր Ասիայի ազգերն էլ Եւրոպայեացի ոսկին նորից յեն տան իրանց առաջվայ տեղը՝ ապրանքներ առնելով: Բայց մինչև էն ժամանակը ինքներ կ'անցկենան: Ի՞նչ պէտք է լինի ուրեմն էս բոլորի հետեանքը, Առաջ առաջ՝ թանկանումն և կըթանկանայ ոսկին—փողը և հացը, յետոյ մշակը: Եւրոպայի տէրութիւններն ունին հիմի 15,720,000,000 ռուբլի պարտք և էս ահագին պարտքի շահը, որ մօտ 600,000,000 ռուբլի է անում, հապիւ հապ կ'արողանում տարեցտարի վճարել Եւրոպան: Գործերի էսպիսի դրութիւններին մտիկ տալով, կարելի է հետեացնել որ

Եւրոպայումը հացը կ'թանկանայ, ապրուստը և մշակը կ'թանկանայ, փողը մեծ շահ կ'ունենայ, հարուստները ահագին շահով կ'գործածեն փողը և աւելի շուտ կ'հարստանան, աղքատները յետին չքաւորութիւն կ'հասնին: Մշակութեան գլինը, որ հացի գին հետ մէկ կ'երպով բարձրանումն միշտ, կ'թանկանայ, մշակ մարդիքը ուրեմն կ'ամաց կ'ամաց փողատէր կ'դառնան: Հարուստները և մշակները կ'հարստանան, գործին անընդունակ մարդիքը՝ այսինքն ամենը շանակած ուժիկով ապրողները կ'աղքատանան և կ'ըստարանայ նրանց կեանքը:

Բայց վերջը Եւրոպայի փողը յետ կ'այ էլի Եւրոպա, երբոր Ասիայի մէջ էլ ծաղկի լուսաւորութիւնը ու քաղականութիւնը և Արաբիայի Պարսկաստանի և Չինաստանի դաշտերումը սարգովին երկաթէ ճանապարհները: Բայց մինչև էն ժամանակը ամենքս էլ կ'զանգատվինք, թէ փող չկայ, փող և փող:

Ա. Ե.

ԵԿԵՂԵՅՈՒ ԲՈՒՐՋԸ ԵՒ ԼԱԼՕՒ ՆԱ-

ՀԱԼԻՆ.

Գողգոթանից Լալօն մէկ 65 տարեկան կնիկ էր, շատ հոգևտէր և մեծ պահանջ-մունքներով, որ իրան պատվին և մեծարեն: Բաւական դաւակնիրի և բարեկամների տէր լինելով, Լալօն ըստ մեծի մասին իր կեանքը իրա բարեկամների մօտ էր անցկացնում: Յանկարծ զաթիւքն ծածկելով «տալս խարսիւս ու-

լի, էս իմ տիղն է, ամբողջն բաժանում
վանքի բըջի տակը մի քանի ու ջիւղի
նահալին է էլի գցած: Նետալի դիդնամ,
վուր քամին է քիզ դէսը գցի, դիդինք
նորահարս ունիք ու խիտ աղղաղալիք
կարեցնում, վիճեց կուլի թէ սուլվել էլի
կանգնած էդ սիւլ մոռնողըսլին, խալսը
կուլ խիթարվին չէ:

—Քան էս ունի խանիծկաչուր անում,
թուրքի ջիջի, ուլ իս, ինչ իս—ձէնտ կըտ-
րէ, թէ չէ սա տէր ունէ. սրա մարթը,
վուր խմանայ, քիզ հունք ու բունքով քա-
մու կուտայ, ուլ է իմանում աշխրթի էն
ծէրը թուցնէ: Գրուտ կանգնի քան, վեր-
ջացրուց պառաւր իր հարսին դառնալով:

Լալօն փախանակ պատասխան տալու,
ձեռները դաթիլի տակիցը հանեց ու պա-
ռաւ կռնիցը յետ քաշելով, գցեց իր յե-
տե ու յետոյ մօտ կացաւ. նրա հարսին
խեղճի կուռը էնպէս ձմթեց, որ նորա-
հարսը աւաճայ «վուր» միայն ասելով
թուաւ միւս կողմը:

Լալօն կանգնեցաւ իր տեղը: Պառաւ
սկեսուրն էլ էս ժամանակը պարապ չէր
անցկացնում, երկու շոր ձեռներով
դայիմ կպիւ էր Լալօի դաթիլիցը: Բայց
Լալօն յաջողութիւն ստացաւ ու իր նա-
հալու վրայ արդէն կանգնած էր առջը
մտիկ տալով, իրրե թէ ոչինչ չէ անց-
կացել:

—Քան սիւլ օց... շարունակումէր էլի
պառաւը, կամենալով մօտ գնալ: Բայց
մէկ էնպէս աչքերը չուլով յետ մտիկ տը-
վեց Լալօն, որ հարսը արտասունքները
աչքին ու ցաւած կուռը քորելով բոլո-
րովին անհետացաւ կանանց մէջ:

—«Բաս դուն ինձ անիծիլ իս, թէ քու
օհտեմէն չըգամ, ասելով պառաւը, տե-
սաւ որ Լալօի հետ հանաք անելի կարելի
և ճարը կտրած վազեցաւ դէպի մղղսին
իրաւունքն դատաստան պահանջելու:

Մղղսին չլիտենալով, թէ ում հետ է պա-
ռաւի դործը, համարձակ դալիս էր պա-
ռաւի յետեից:

—Այ էս բարադուր, էս աշաղաւրը,
մղղսի ջան, մէկինձի կործան դուտարն,
մէ, մէ, մէ... իմ նահալին է կօտէ, դու-
լը տըրտմալանելով դանդաղումէր պա-
ռաւը մղղսուն:

—Ամօթ չի, պառաւ ամբարթիք էք,
ժամ էք եկել, քրիստոնէք էք, բարձա-
կուր էք տալի, դեռ չի էլ լիտայել...
ասումէր մղղսին ու յետը վախենալով մը-
տիկ էր տալիս Լալօին, որն որ իրրե թէ
չլսելով նրա դալը, արժանի չէր համա-
րում մինչև անդամ մտիկ տալը:

Լալօն խելով մղղսուն վերջին բառերը
յանկարծ բարկացած յետ մտիկ տվեց:

—Մինաս, դուն ինչի՞ր իս դու տալի էս-
տի, դնա քու բանին թէ չէ, էստի հա-
սաւ (իր բողաղին ցոլց տալով), մէկ էլ
տեհար առաջնորթի մօտ տուն ննդայ
հա...:

Մղղսի Մինասը թողեց պառաւին, «զըլ-
խներդ քարին» ասելով բնդնդալով դը-
նաց իր տեղը:

—Սըրը... ինչ խարար է, մէկ քանի՜ ան-
գամ, էս միջոցին լսելիցաւ մարդկանց դա-
սից. բայց որովհետեւ եկեղեցուց երկուս-
ները միմեանց ձեռիցը ուռու ճիւղեր էին
խլում և միմեանց ետեիցն էին վազում, էլ
պատճառով Լալօի նահալու վէճը էնքան
մեծ ազդեցութիւն չէր անում մարդկանց
դասի վրայ:

Պառաւ տեսաւ, որ Լալօից մղղսին էլ
վախեցաւ, ճարը կտրած դնաց իր հարսին
պտուելու, որն որ Լալօիցը հեռացել էր,
խառնվել էր կանանց մէջ:

Ժամի դուրս դալուց յետոյ Լալօն պատ-
մումէր իր յաղթութիւնը մէկ քանի ծա-
նօթ կանանցը և տեղեկութիւններ էր ժո-
ղովում, թէ ուլ է իր հետ կուլող պա-
ռաւը ու նրա հարսը:

Ասումն է թէ մէկ շաբաթից յետոյ դա-
տաստանատուն պահանջեցին Լալօին և
եկեղեցուցն էլ տարան նրա չիւանահա-
լին քննելու ու գննելու:

Ա. Ե.

ԱՌԵՒՏՐԱՅԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիւերպուլումը փետրվարի 4-ին
բամբակի առուտուրը հանդարտ էր:
Ամերիկայի միջակ տեսակը ծախվե-
ցաւ, ֆունտը 18³, պէնսոլի եզիպառ-
սինը 21¹, պէնս, Բենգալիայինը ջոկո-
վին 10³, պէնս:

Փետրվարի 7-ին ծախվեցաւ 8.000
հակ բամբակ մի և նոյն գներով:

Տեղեկութիւն է ստացած Լօնդո-
նումը, որ պատերազմի վերջնայու-
թից մինչև էս 1866 թվի սեպտեմ-
բեր ամիսը Ամերիկան կարող է տալ
հազիւ թէ 2,000,000 հակը բամ-
բակ. բայց պատերազմից առաջ Ա-
մերիկան ամեն տարի 3 միլիոնից
մինչև 4 միլիոն հակը բամբակ է է-
լել տալիս: Հերու ընդամենը Անգլիայ
բերած են ամեն կողմերից 2,755,321

հակը բամբակ, որից 890,830 հակը
յետոյ դուրս են տարած ուրիշ եր-
կիրներ. և 1866 թվի սկզբներին մնա-
ցել էր անձեռը տալ 405,488 հա-
կը: Գնացած բամբակը գործ է ած-
վել Անգլիայի ֆաբրիկաներումը:

Լօնդոնումը բուրդը դուրս էր գնում
փետրվարի 13 ին էս գներով: Թուշի
աշխան սպիտակը—լիպրէն 10 պէնս:

« » բուրդ—6¹—7 պ.« գարնան սպիտակը—8¹—9 պ.« » բուրդ—6¹ պ.

Կ. Պոլիս, փետր. 19 ից գրում են,
ծախվում է երեւանու բամբակը հո-
լսան 15 դուրուշ: Եդ օրը ծախվեցաւ
1200 հակը ամեն տեսակ բամբակներից,
սրանից մօտ 700 հակը ծախվեցաւ
երեւանու բամբակ, հոլսան 15¹—³
դուրուշ:

Թիֆլիս 1866 թ. Մարտի 5:
երեւանու բամբակը 12 մ. 12 մ. 50 կ.
Թուշի բուրդը 6¹—7 մ:
Եւպլայի լեղակը 155—160 ման,
6 ամիս ժամանակով:

Ինգլիզու շաբարը 9 մ. 70 կոպ.
Ռուսինը 10 մ. 10 կ:
Ռսկին 6 մ. 61 կոպ. և 6 մ. 62 կ.
Արծաթը 72 պրօբի—1000 մանէ-
թումը 65 մանէթ խօրդայի փող:
» 84 պրօբի 1000 մ.—230 մ:
Բամբակեղենի առուտուրը թոյլ է: